



ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ

Փետրվարի 2-ին, հինգշաբթի, Մայր Աթոռում հանդիսությամբ նշվեց «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց, հաղար երեսուն և վեց վկայիցն» տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը:

Զորեկշաբթի, երեկոյան ժամը 5-ին, Մայր տաճարում կատարվեց Վարդանանց նախատոնակը՝ հանդիսագրությամբ լուսարարապետ սրբազան հոր: «Նորահրաշ պսակաւոր» շարականի երգեցողությունը մի անգամ ևս բոլորի հիշողության մեջ վերակենդանացրեց պայծառ անունները եկեղեցու և հայրենիքի անձնուրաց մարտիկների՝ Ղեոնդյանց ուխտապահ քահանաների և Վարդանանց հայրենասերների:

Հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես Ժ. վրդ. Պողապալյանը:

Ս. պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունն ու հավատացյալների բազմությունը:

Ժամը 12.30-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր տաճար:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետի հանդիսագրությամբ կատարվում է հոգեհանգիստ, «վասն համօրէն ննջեցելոց», որոնք ընկել են դարերի ընթացքում ռազմի

դաշտում, «վասն Յիսուսի և վասն հայրենեաց»:

Հավարտ ս. պատարագի իջման ս. Սեղանի առաջ կատարվում է «Հայրապետական մաղթանք»:

Արարողությունից առաջ պատարագիչ հայր սուրբը հոգեշունչ քարոզ է խոսում Վարդանանց և Ղեոնդյանց տոնի առիթով՝ «Մի երկնչիր, հօտ փոքրիկ» բնաբանով: Քարոզիչ հայր սուրբը խանդավառորեն նկարագրում է հավատքի և հայրենիքի նահատակների ուսանելի կյանքը և նրանց անձնազոհ պայքարը հանուն խղճի ազատության, եկեղեցու զորացման ու հայրենասիրական գիտակցության ամրապնդման, շեշտելով, որ սերունդներ են դաստիարակվել և ներշնչվել Ղեոնդյանց ուխտապահությամբ և Վարդանանց ոգիով: Քարոզիչ հայր սուրբը իր քարոզը վերջացնում է Մայր Աթոռի պաշտոնության և Վեհափառ Հայրապետի բաշտոնության մաղթանքներով:

Այնուհետև կատարվում է «Հայրապետական մաղթանք»-ը, որից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է վեհարան, որը ընդունում է շնորհավորություններ իր անվանակոչության տոնի առիթով:

Ժամը 1.30-ին հոգևոր ճեմարանում կազմակերպվում է գեղարվեստական հանդես՝ Ղեոնդյանց և Վարդանանց հիշատակին նվիրված:

Հանդիսությունը նախագահում էր Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Ա-

թոռի և Գերագույն հոգևոր խորհրդի անդամներով:

Հանդիսությունը սկսվում է Վարդանանց «Նորահաջ պսակաւոր» շարականով և հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես Ժ. վրդ. Պողոսյանի ներածական ջերմ խոսքով:

Ճեմարանի ուսանողական երգչախումբը, հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյանի ղեկավարությամբ, կատարում է «Թէ հայրենեաց», «Ով դու բարեկամ», «Իմ հայրենեաց հոգի վարդան», «Միփանա քաջեր» խմբերգերը, իսկ մի խումբ ուսանողներ՝ Վարդանանց մանկուհիները, «Արիացեալք»-ը և «Լոնց, ամպերը եկան ծածկեցին երկինք»-ը:

Այս արարների ուսանող Հովհ. Գրվրգյանը, մի քանի ընկերներով, արտասանում է Վ. Թեքեյանի «Նորհուրդ Վարդանանց»-ը, Բ. լսարանի ուսանող Ա. Մարտիրոսյանը՝ Միլվա կապուտիկյանի «Երգում մայրենի լեզվի»-ն: Բ. լսարանի ուսանող Վրեժ Ներսիսյանը, հանուն ճեմարանի ուսանողության, ընթերցում է գրավոր մի ջերմ ուղերձ՝ նվիրված Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնին:

Օրվա ազգային-եկեղեցական մեծ տոնի առթիվ կադմակերպված հանդիսության գլխավոր բանախոսն էր հոգևոր ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս Պարզ Եհաբազյանը, որը հանդես եկավ Վարդանանց պատերազմի ազգային-եկեղեցական և հայրենասիրական նշանակությամբ նվիրված ընդարձակ և բովանդակալից զեկուցումով:

«Ոչ եթէ մարմնական համարէին զկոիւն, այլ հոգեւոր առաքինութեան:

ԵՂԻՇՆ

Ազգերի և ժողովուրդների պատմության մեջ կան որոշ իրադարձություններ և այդ իրադարձությունների հետ անբաժանելիորեն կապված առանձին անուններ, որոնք բնութագրում են տվյալ ազգի կամ ժողովրդի հավաքական նկարագիրը, հանրագումարի բերում այդ ազգի հոգեկան ու բարոյական ամենացայտուն հատկանիշները և ուղենիշ հանդիսանում հետագա ժամանակների համար: Այդ նրանից է, որ ոչ միայն տվյալ անձի կամ դեպքի մեջ ժողովուրդը գտնում է իր էության ամենից բնորոշ, ամենից ներհատուկ մասը, որը կենսունակ է ու հաղորդական, և հանդիսանում է հոգեկան ու բարոյական սնունդ, այլ մանավանդ առաջմղիչ հսկայական ուժ թե՛՝ այսօրվա և թե՛՝ վաղվա ձգտումների ճանապարհին:

Այդպիսի մի բացառիկ իրադարձություն է ահա մեր ժողովրդի պատմության մեջ

Տղմուտ գետի ափին մղված՝ իր արտաքին չափերի մեջ չափազանց աննշան ու փոքրիկ այն հակատամարտը, որը սակայն հեռավոր դարերի խորքից դեռևս շարունակում է ազդել մեր նոր սերունդների վրա ու ներշնչել մեզ: Արդարև, ավելի քան մեկուկես հազարամյակի վրա երկարաձգվող ամենակուլ ժամանակը չի կարողացել հայ ժողովրդի մտքից ու սրտից ջնջել այդ բացառիկ եղելության վսեմ գեղեցկությունը, որովհետև խորապես նվիրական այն նպատակը, որի համար մղվեց այդ հակատամարտը, մարդկայինից վեր է բարձրանում և եղական այդ դեպքին տալիս է սրբության անջնջելի մի հմայք: Այս հանգամանքով պետք է բացատրել այն մեծ խանդավառությունը, որ ամեն տարի ոտքի է հանում բովանդակ հայ ժողովրդին՝ եկեղեցիներում թե՛ ազգային բեմերի վրա ոգեկոչելու և տոնախմբելու փառապանծ հիշատակը Վարդանանց ու Ղեոնդյանց սուրբ նահատակների:

Վարդանանց պատերազմն անշուշտ ունեցել է իր տնտեսական ու քաղաքական շարժառիթները, որոնք բավականին մանրամասն շարադրված են Նղիշեի ու Փարպեցու պատմությունների մեջ:

429 թվականին, Արշակունյաց թագավորության անկումով, կերչ է տրվում Մեծ Հայքի անկախ պետականությանը: Հայաստանը կառավարվում է մարզպաններով: Այդ թվականից հետո Հայաստանը պահպանում է իր ներքին ինքնավարությունը: Պարսկական կառավարությունը բավարարվում է Հայաստանից հարկեր վերցնելով: Հայ նախարարները պահպանում են իրենց ունեցվածքներն ու գործակալական իրավունքները: Մամիկոնյանները մնում են որպես սպարապետներ, վահան Ամատունի վարում է հազարապետի պաշտոնը, իսկ դատավարական իրավունքը մնում է հայ հոգևորականության ձեռքում:

Այս դրությունը փոխվում է, երբ Պարսկաստանում իշխանության գլուխ է անցնում ռազմատենչ ազնվականության ներկայացուցիչ Միհրներսես հազարապետը:

Դեռևս երրորդ դարից սկսած պարսիկները բրիստոնյաների դեմ բուռն հալածանքներ էին սկսել, բայց այդ հալածանքները չէին կարողացել բրիստոնեությունը արմատախիլ անել նրանց միջից: Ընդհակառակն, չորրորդ և հինգերորդ դարերում բրիստոնեությունը առավել ևս աճել էր հատկապես հայերի, ինչպես նաև վրացիների, ազվանների և կովկասյան այլ փոքր ժողովուրդների մեջ: Իսկ Պարսկաստանի աչքում բրիստոնեության հաստատվելը այդ ազգերի մեջ նշանակում էր նրանց հանել իր ազդեցությունից և կա-

պել Բյուզանդական կայսրությանը, որովհետև մրցակից այդ մեծ պետությունը հենց ինքը քրիստոնեական կրոնի մի ուժեղ օջախ էր դարձել: Ինքնըստինքյան հասկանալի է, որ պարսկական գահը անհրաժեշտ էր համարում կուկասյան ժողովուրդների մեջ քրիստոնեության բնաշնչումը և զրադաշտականության հաստատումը, որովհետև այդ միջոցով միայն հնարավոր էր ապահովել իր քաղաքական տիրակալությունը նրանց վրա:

Այդ քաղաքականության իրագործման ճանապարհին գլխավոր խոչընդոտը հայերն էին: Հայերն իրենց քրիստոնեական կրոնով միշտ էլ հակումներ էին ունեցել դեպի քրիստոնյա Բյուզանդիոնը: Բացի այդ, գրեթե գլուտը, հայ նոր սերնդի ուսումնառությունն ու դաստիարակությունը հունական կենտրոններում, հունական մշակույթի ուժեղ ներթափանցումը Հայաստանում, այս բոլորը չէին կարող վրիպել պարսկական արքունիքի ուղադրությունից: Այսպիսի մտայնությամբ ու դաստիարակությամբ աճած մի սերունդ, քրիստոնյա իր մեծ հարեանի հետ, օրերից մի օր կարող էր վտանգել պարսկական կայսրությունը: Հետևապես, հայերին վերջնականապես ձերբազատելու համար Բյուզանդիոնի քաղաքական ազդեցությունից հարկավոր էր նախ կրոնապես ձերբազատել նրանց ու հեղաշրջել զրադաշտական կրոնին: Կրոնի միությունը պարսիկների ու հայերի միջև այնուհետև առաջ կբերեր գաղափարի միությունը, որին կհաջորդեր քաղաքական միությունը, որը և ուժեղ խարսխ կհանդիսանար պարսկական կայսրության տակ ապրող բոլոր օտարահպատակների վերջնական ձուլման: Ահա թե ինչու՞ Միհրանեսին ծրագրեց ջնջել քրիստոնեությունը ամենից առաջ հայերի միջից, որովհետև իրենց կայսրության սահմաններում ապրող բոլոր քրիստոնյաների մեջ հայերն էին մշակույթով ու գաղափարով ուժեղագույնները: Այս տեսակետից ուշագրավ է նրա հետևյալ խորհուրդը արյաց արքային, որ հիշատակված է Ղադար Փարպեցու աշխատության մեջ:

«Արգ, քանի՞ երկրներ կան, որոնց վրա դուք աստվածաբար իշխում եք, որոնց կարող եք սպանել կամ ապրեցնել: Նախ և առաջ Մեծ Հայոց երկիրը, որ շատ պիտանի և օգտակար է և նրան կից վրաց ու աղվանից երկրները... Դուք ինքներդ և բոլոր արիները գիտեն, թե ինչպես մեծ ու պիտանի երկիր է հայոց աշխարհը, բայց մոտ է ու սահմանակից կայսեր իշխանությանը և միևնույն օրենքն ու պաշտամունքի ձևերն ունի, որի համար կայսրը նրանց վրա ազդեցություն ունի: Եվ եթե մեր կրոնին դարձնենք նրանց... ուղիղ ճանապարհի կգան, և այնուհետև կսի-

րեն մեզ և Արյաց աշխարհը, և կայսրից, նրա կրոնից ու երկրից կհեռանան: Եվ եթե հայերը սրտանց մերը լինեն, վրացիներն ու աղվանները մերն են ու մերը»: Այս հատկանշական վկայությունը ցույց է տալիս, թե V դարում ինչպիսի՞ մեծ նշանակություն է ունեցել Հայաստանը Պարսկաստանի համար: Բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ Հազկերտ Բ-ը դիվանագետ և խելացի վեհապետ է եղել և բարյացակամ՝ դեպի Հայաստանը: Դրա համար էլ Վարդանն ու հայ նախարարները գործակցում էին նրան, նրա զինվորական լավագույն ուժն էին կազմում և փառավոր հաղթանակներ ապահովում կայսրությանը: Սակայն կույր ատելությունը, ազգայնամոլ ձգտումները, մանավանդ կրոնական մոլեռանդությունը փոխեցին նրա քաղաքականությունը: Որպես համապարսկական քաղաքականության հետևող, նա երազում էր իր տիրապետությանը ենթակա հսկայական հողամասերի վրա ստեղծել միազանգված մի ժողովուրդ: Հայերի պարսկացումն ու ձուլումը, անտարակույս, մեծ չափով կհեշտացներ նրա աշխարհակալական ծրագրի իրականացումը նաև Բյուզանդիոնի հանդեպ: Հազկերտի այս ծրագիրը հետևաբար վտանգի տակ էր դնում մեր ազգային ինքնությունը գոյությունը և քրիստոնեությունը Հայաստանում: Հազկերտ Երկրորդն այնուհետև ծրագրված կերպով հետապնդում է իր քաղաքականությունը մինչև Ավարայրի ճակատամարտը՝ տնտեսական հարկային ծանր ճնշման միջոցով հպատակ քրիստոնյա աղվերին իրեն ենթարկելու համար: Ահա թե ինչ է գրում այդ առթիվ Նղիշեն. «Եվ այս ամենն անում էր, որպեսզի գուցե բանդի միաբանությունը, և եկեղեցու ուխտը ցրվի, և միայնակացներին փախցնի և շինականներին տկարացնի. և չափազանց աղքատության պատճառով ակամա ընդունեն մոգական կրոնը»: Պարսիկների վարած այս քաղաքականությունը խոր դժգոհություն է առաջ բերում հայ ազգաբնակչության բոլոր խավերի մեջ: Այնուհետև ոգևորված հոների դեմ տարած իրենց հաղթանակից և Հայաստանում Դենշապուհի վարած քաղաքականության հաջողություններից, պարսիկները 449 թ. կրոնափոխության առաջարկ են անում հայերին, որն առավել ևս խորացնում է Հայաստանում ընդհանուր ալլ դժգոհությունները: Այդ նույն թվականին Արտաշատում, Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ, տեղի է ունենում հայ նախարարների և հոգևորականների միացյալ ժողով, որը միաձայնությամբ մերժում է կրոնափոխության մասին պարսկական կառավարության առաջարկը: Հազկերտ Բ-ին դուր չի գալիս

որ հայտատկների այդ բայլը: Զայրացած, առ Տիգրան է հրավիրում աչքի ընկնող հայ լիարժեքներին՝ բացատրություն ստանալու ամար: Հայաստանի իշխաններից կանչվում են տասը հոգի, որոնց մեջ և մարզպան Վաչագակ Սյունին ու սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Տիգրանում, աքսորի ու մահվան պատժալիքների տակ և ռազմական ու դիվանագիտական ինչ-ինչ նկատառումներով, աչք իշխանները որոշում են ընդունել Հաղարտի առաջարկած հավատափոխությունը՝ առերես ուրանալ քրիստոնեությունը, որպեսզի հետագայում հնարավորություն ունենան նախապատրաստելու զորքն ու ժողովուրդը ապստամբության համար: Այդպես էլ արվում է:

450 թվականի վերջերին Հայաստանում աչք նախարարների մեջ ապստամբության ուրջ առաջանում են երկու գլխավոր ուղղություններ, որոնք հայտնի են «հայրենասերներ» և «պարսկասերներ» անունով: Առաջինի գլխավորում էր Վարդան Մամիկոնյանը, իսկ երկրորդին՝ Վասակ Սյունին:

Վարդանանց ճակատամարտը տեղի ունեցավ 451 թվականի մայիսի 26-ին: Հայերը ռազմական պարտություն կրեցին այդ ճակատամարտում պարսկական զորազանց ուժերի դիմաց: Այդ կովում զոհվեցին՝ Վարդան Մամիկոնյանը և նրա հետ բազում քաջ իդալակիցներ: Սակայն կարևորն այս դեպքում դերի հաղթությունը չէ. կարևորն այն է, թե պարսկական պետությունը իր այդ հաղթանակով իր մեծ ծրագրի իրագործման ճանապարհին կարողացա՞վ հասնել արդյոք իր նպատակին: Ռազմի դաշտում ծնկի բեռնով ու նվաճելով հայերին, կարողացա՞վ արդյոք նվաճել և նրանց հոգին: Հետագա դեպքերի ամբողջ ընթացքն ապացուցում է, որ՝ ո՛չ: Հայերը կորցրեցին ճակատամարտը, բայց երբե՞ք՝ պատերազմը: Ինչպե՞ս պատահեց, որ պարսկական վիթխարի ռազմական ուժը տեղի տվեց, նահանջեց հպատակ մի փոքր ժողովրդի ոգեկան մեծ ուժի առաջ: Ինչո՞ւմ էր եղել արդյոք պարսից պետության սխալը, ի՞նչն էր, որ հաշվի չէին առել նրանք հավատափոխության պաշտոնական գիրն ուղարկելուց առաջ: Ահա այս հարցի վրա է, որ անհրաժեշտ է առավելապես կանգ առնել՝ իմաստավորելու համար ստան դատողությունը անըմբռնելի խելակորույս մի ընդվզման և գիտակցված մի մարտիրոսացման ամբողջ վեհությունը:

Հայ ժողովուրդը առաջինը եղավ, որ քրիստոնեությունը հռչակեց իր ազգային ու պետական կրոն: Իսկ Ե դարում քրիստոնեությունն արգեն հեղաշրջել էր հայերի ազգային կյանքը: Հայ եկեղեցին, շնորհիվ իր

ստեղծած հայեցի քրիստոնեական մշակույթի, հայ ժողովրդի գիտակցության մեջ բարոյական այնպիսի մի հեղաշրջում, ոգեկան այնպիսի մի զորություն էր առաջ բերել, որ մեր ազգի համար հայ եկեղեցու ուրացումը հավասար էր իր սեփական հոգու ուրացման: Եթե պարսիկների համար կրոնի փոփոխումը էպոս բաղաբական նշանակություն միայն կարող էր ունենալ, հայերի համար, ընդհակառակն, իրենց կրոնը իրենց հոգին իսկ էր դարձել, ու փոխակերպել իրենց հավաքական իսկությունը, հետևաբար կրոնի ուրացումը՝ հենց իրենց իսկ էության ուրացումը կլիներ: Ահա թե ինչո՞ւ պարսիկները չհասկացան հայերի համայնական ծառացումը իրենց ահավոր բանականի դեմ: Զհասկացան Վարդանանց այն հայտարարությունը, թե իրենք պատրաստ էին քաղաքական հպատակություն, բայց ի գին իրենց արյան, բացարձակապես չէին կարող հաշտվել իրենց խղճի, հավատքի և հոգու ուրացման հետ: Հետևելով ավետարանական սկզբունքին, նրանք կատարյալ հավատարմությամբ տվեցին, ինչ որ պետք էր տալ կայսեր, և վճռեցին չտալ կայսեր, ինչ որ Աստծուն պարտավոր էին տալ: Հայերը ավելիով տվեցին պարսից կառավարությանը և ծառայեցին սպառնալու աստիճան: Իսկ Հայաստանում իրարմությունը այնպիսի հարստահարությամբ գանձվեց, որ նույնիսկ պարսիկները զարմանք էին հայտնում, թե այդպիսի կեղեքումներից հետո հայոց աշխարհը դեռ ինչպե՞ս կարող էր շեն մնալ: «Աւարարութ ստացուածոց նոցա աշխատեցան, և աւարն օր քան զօր աճեցեալ բազմացաւ», գրում է պատմագիրը: Խնդիրն այս անգամ հայ ժողովրդի ազգային ներքին կյանքի, նրա հայեցի. գոյության պահպանությունն էր վերաբերում: Պարսից պետական կրոնին հպատակվել, նշանակում էր ուրանալ գոյության իրավունքն ու խղճի ազատությունը: Եվ հայ ժողովուրդը «ո՛չ» ասաց միասնաբար, իր հոգեորականներով ու աշխարհականներով, ազնվականներով ու շինականներով: «Յայսմ հաւատոց զմեզ ոչ որ կարէ խախտել, ո՛չ հրեշտակք՝ և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր և ո՛չ հուր, ո՛չ ջուր, ո՛չ ամենայն զի՛նչ և են դառն հարուածք», գրում է անմահ Եղիշեն՝ արտահայտելով հանդիսանալով այդ ժամանակաշրջանի հայության ընդհանուր տրամադրությունների:

Ոգեկ. ն այս անբաբառելի միության և հաստատակամության բուն գաղտնիքը պետք է որոնել թարգմանիչ վարդապետների կատարած մշակութային գործունեության մեջ: Հայ հոգևոր մշակույթը, հայեցի գիրն ու գրականությունն էին, որ հոգեպես շաղկապում և համազգայնորեն կազմակերպում էին

ողջ հայութիւնը: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ու նրա հոգևորական դասն էր, որ, համահայկական որպես միակ կազմակերպություն, պահեց-պահպանեց հայ ժողովրդին ասորա-հելլենական օտարացնող աղբեցություններից և Սասանյան պետության կրոնական-գաղափարական բոլոր գրոհներին: Ս. Սահակը, ս. Մեսրոպը և նրանց աշակերտները, ամբողջ երկար շարանը մեր պատկանելի վաստակավորներին, հայացքին մեր եկեղեցին. հայը եղավ ճաշ ֆրիստոնյա՝ ազգային իր ուրույն անհատականությամբ: Հայ եկեղեցին և հայ ազգը նույնացան: Քրիստոնեությունը հայի համար դարձավ իր միսը, իր արյունը, անբաժանելի, անքակտելի, և ո՛չ թե մի զգեստ, որ հեշտությամբ կարող ես փոխել: Այս իմաստով էլ Վարդանանց դյուցազնամարտը խորհրդանշում է հայ ժողովրդի գիտակցության մեջ արմատավորվելը այն հավատքի, որ հայ ազգի էությունը նույնանում է իր կրոնական էության հետ, և հետևաբար անպարտելի է նա քաղաքական որևէ զորության կողմից, ինչքան էլ սարսափելի լինեն նրա զենքերը: Ահա ա՛յս է, որ չկարողացավ ըմբռնել պարսկական կառավարությունը: Նա չկարողացավ հասկանալ, որ Վարդանանք ճակատամարտ մտած պահին իսկ շահել էին հաղթանակը, այսինքն՝ հայ ժողովրդի ազատությունն ու անմահությունը:

Վարդանանց դյուցազնամարտը իր արդյունքներով դուրս է գալիս հայ ազգային պատմության շրջանակներից՝ Վարդանանց ու Վահանյանց դիմադրությամբ վերածվելու համար նաև արևմուտքի ընդհանուր քրիստոնեության պաշտպանության պայքարի: Այդ հերոսական դիմադրությամբ հայ ժողովուրդը զրադաշտականության ընդհանուր առաջխաղացումը կասեցրեց՝ կանխելով նրա տարածումը արևելքում: Եթե այն ժամանակ հայերն արյուն լիցափեին, մեզ հարևան քրիստոնյա ժողովուրդները, անտարակույս, չէին կարողանա դիմանալ պարսկական գրոհներին և ի վերջո կընդունեին կրակապաշտությունը: Ավելին, եթե հետագա դարերում չիներ Վարդանանց պայքարով զորացած և իր քրիստոնեական կրոնի մեջ միավորված Հայաստանը, պարսկական և ապա արաբական արշավանքները մեծապես կթուլացնեին քրիստոնեությունը Բյուզանդական կայսրության մեջ: Հետևաբար, քրիստոնեությունը արևելքում իր պահպանման ու ծավալման համար մեծ մասամբ պարտական է քրիստոնյա Հայաստանին: Այս իմաստով էլ Վարդանանք հանդիսանում են համաշխարհային քրիստոնեական քաղաքակրթության առաջին ջերմնուանդ պաշտպանները: Արդյոք Վար-

դանն զգո՞ւմ էր իր դյուցազնության այդ մեծափառ ճակատագիրը, երբ Տիգրանում Հազկերտի դիմաց հախուռն ինքնապատահությամբ հետևյալն էր հայտարարում. «Հնարիմ օգնականութեամբ Աստուծոյ գործել զործ այնպիսի, զոր ոչ միայն առաջի ձեր Արեւաց, այլև ի կայսեր Դրանն և յայլ ազգս պատմեսցի համբաւն այն մինչև ցլաւտեան...»:

Վարդանանց ճակատամարտը, իբրև փորձիկ մի ժողովրդի կողմից մի մեծ տերության դեմ մղված կռիվ, գրեթե անզուգական է ամբողջ մարդկային պատմության մեջ: Այդ ճակատամարտը բիրտ ուժի դեմ իրավունքի մարտնչումն է, և որպես այդպիսին, ավելի դյուցազնեցողություն է, քան պատերազմ. և արդեն մեր գրականության մեջ նրա մասին պատմությունից ավելի մի դյուցազնեցողություն է պահվում, այսինքն գաղափարական հաղթանակի նվիրված մի երգ: Հաշիվը, գիվանագիտությունը չէ, որ գործում են նրա մեջ, այլ սերը, նվիրումի ոգին, որը շփտի սանձվել, որը չի ճանաչում տրամաբանություն, որն զգում է, թե մեռնելն անհրաժեշտություն է այնտեղ, որտեղ կյանքն այլևս կորցնում է իր նշանակությունը: Եկեղեցին և բանակը, քաղքենին ու շինականը, սեպուհն ու ռամիկը, կանայք ու երեխաները, բոլոր հասակները, բոլոր դասակարգերը կարծես շարժվում են մեկ զսպանակից. «Հայր մեր զԱնտարանն ճանաչեմք և մայր՝ զառաքելական եկեղեցիս Հայաստանեայց»: Այս է եղել բանակի նշանաբանը: Վարդանանց կռիվը Ավետարանի լուսավորչական դիմադրության պոթեկումն է, իր զավակների պաշտպանության համար կատաղած վագրի դեմ ծառացող մի մոր հուսահատ մաքառում: Ու այդ պոթեկումը այնքան ահարկու է, որքան մաքուր է իրավունքի գիտակցությունը, որ նա ունի իր դատի արդարության մասին: Այս զգացումով են գրել իրենց երկերը երկու ժամանակակից մատենագիրները՝ Նիկիթեն ու Փարպեցին: Նույն զգացումով է համակված նաև Շնորհալին՝ նրանց հիշատակի պանծացումին նվիրված իր երգի մեջ:

Ավարայրի ճակատամարտի օրից սկսած ժողովուրդների պատմության մեջ արձանագրվեց հետևյալը, որ ուժի քաղաքականությունը ամեն անգամ պայման չէ վերջնական հաղթանակի, և որ գաղափարի դիմադրականությունը կարող է վերջիվերջո հոգեցնել ու կոտրել այդ ուժը: Սոկրատին թունավորեցին նրա պես շմտածողները, որպեսզի դադարի ճշմարտություններ խոսելուց, բայց նա իր գաղափարներով ու իմաստասիրական ըմբռնումներով շարունակում է ապրել հա-

սարակութեան մեջ: Նաղովրեցիին ամբողջ հրյա ազգի կողմից, բիրտ ուժի ծանր հարվածների տակ, խաչվեց Գողգոթայի բարձունքի վրա, և նոր հոգին ավանդեց, բիրտ ուժին հավատացողները երկար շունչ քաշեցին ու մտածեցին, թե հաղթանակած են իրենք, բայց նաղովրեցիին ոչ միայն ապրեց, այլ 20 դարերից ի վեր ամեն քրիստոնյա հավատացյալի մեջ ներշնչող և հեղաշրջող ուժ է: Վարդանը սպանվեց, սակայն բուն իր մարտիրոսությունը իրավունք նվաճեց ապրելու ամեն հայի սրտում՝ ստեղծելով նորանոր վարդաններ ու հերոսներ ամեն դարում և ամեն տեղ, որտեղ հայը ապրեց: Աշխարհի այդ ժամանակվա ամենամեծագույն պետությունը, որն իր Արեւմտեան շրջանում, ճիշտ տասը դար առաջ, Թերմոպլեի կիրճի առջև կոտորվեց և նրա 300 քաջամարտիկ զինվորների դեմ մարտնչելիս հասկացել էր, թե թիվը չէ, որ կազմում է ուժը, այս անգամ և, իր Մասանյան հարստության ամենամոլեգին օրերին, Ավարայրի առջև վերահասու եղավ, թե բազմությունից և երևացող մեծությունից առաջ և վեր կա մի ուրիշ ավելի իրական զորություն, և թե ապրելու իրավունք ունի որևէ ազգ, երբ նրա մեջ կան մարդիկ, որոնք գիտեն և կարող են իրենց համար պարտականություն համարել մեռնել՝ իրենց համար նվիրական մի սկզբունքի զոհասեղանի առջև:

Վարդանանց ճակատամարտը մի ներքին խորհուրդ ևս ունի: Նրան հաջորդող դարերը անջնջելի կերպով պահել են միշտ այն անդիմադրելի հմայքը, որ բխում է Տղմուտի սրբազան ճակատամարտից: Վարդանանց հիշատակը ազգային գիտակցության ու խանդավառության մի ջահ դարձավ մանավանդ Կիլիկյան թագավորության անկումից հետո, երբ հայ ժողովուրդը, տարագրված իր հայրենի երկրից և կամ պանդխտացած օտար երկիրներին տակ, իր ազգային ինքնությունը դիմադրեց պահպանելու համար պետք ունեւ հզոր ներշնչումների: Ու Վարդանանք մարմնավորում էին մայր հողին կառնող հայրենասիրությունը: Սրբազան երգիչը՝ Շնորհալին, Վարդանանց սքանչելի շարականի՝ «Արիացեալը»-ի մեջ դարերի խորքից Վարդանանց ոգին է, որ ոգեկոչում է, երբ հայ ազգը նոր անօրենների սարսափների տակ զալարվում էր: Մարգարեական մի շունչ կա այդ սրբատառ տողերում.

«Փոխանակեալը զունայնութիւնս ընդ ճըշմարիտ լուսոյ անմահութեանն. փափաքանաց ձերոց առիթ զկատարումն, մաքրիլ արեամբ յաղտոյ մեղաց տղմոյ՝ Զօրականք յաղթողը, պատկեալը ի Քրիստոսէ»:

Վարդանանք և Ղևոնդյանք կամ պարզապես միության գծիկով՝ Վարդանանք-Ղևոնդյանք, մի նշանատախտակ է այլևս, փառավոր մի վերնագիր, որի տակ պետք է գրել մեր ազգի դադափարական հեղափոխությունների պատմությունը, մի պատմություն, որի մեջ պատկերազարդվեն ու պարզվեն սրբության և արիության, դյուցազնական առաքինության ու հավատքի, հույսի և սիրո մղումով կատարված մեծագործությունների այն բոլոր դրվագները, որոնցով այնքան հարուստ է արդարև մեր պատմահոր մատնանշած «փոքր ածուռ»: Ու եթե շարունակում ենք ապրել մինչև այսօր իրեն ազգ, այդ նշանակում է, որ Վարդանանց պատերազմը ավելի կամ նվազ գեղեցկությամբ ու սաստկությամբ շարունակված է միշտ և դեռ շարունակվում է մեր ժողովրդի կյանքում:

Ամեն օր ու ամեն ժամ Վարդանանց ոգին հրաշքներ է գործում թե՛ այստեղ՝ Արարատի հավերժական հայացքի առաջ, և թե՛ մանավանդ գուրսը՝ սփյուռքի տարածքի վրա, մեր եղբայրների մեջ, որոնք անընկճելի ոգու անբացատրելիորեն բարձր ու համանման իդեալներով վառված, նույն կոիվը կմղեն: Եվ աշխարհը խոստովանում է, թե մղվածը ֆիզիկական կուլտուրայի բարոյական ու հոգևոր առաքինության պահպանման համար մղված մի պայքար է ինքնին:

Վարդանանց խորհուրդը, Վարդանանց գաղափարականը, որպես մի լուսեղեն սյուն, այսուհետև ևս թող բարձրանա թե՛ սփյուռքում ցրված և թե՛ մայր հայրենիքում ապրող հայության վրա, առաջնորդի նրան սիրո մեջ դեպի մեր հայրենիքն ու եկեղեցին, դեպի մեր նախնիների անտեղիտալի հավատքը, դեպի մեր ընտանիկան ու ազգային սրբությունները: Թող ընդմիշտ կենդանի մնա այդ ոգին, որը միայն կարող է ապրեցնել այս ազգը, թող մեր պատմության մեջ հավիտյան պայծառ մնան Վարդանանց ու Ղևոնդյանց պատկերն ու նրանց զարթեցրած գաղափարը, և նրանց ազդեցությամբ թող շարունակ ոգևորվի, մեր ազգային գործունեության մեջ, ճշմարիտ քաջությունն ու իմաստությունը:

Կեցցե՛ք Վարդանանց սուրբ հիշատակը: Հավիտյան կեցցե՛ք նրանց ոգին մշտապես իր մեջ վառ պահող հավերժական հայ ժողովուրդը:

Այսօր, երբ տոնում ենք Վարդանանց հիշատակը, մի սրտագին պարտականություն ունենք: Այսօր անվանակոչության տոնն է նաև ազգիս սիրեցյալ հայրապետ Ն. Ս. Օծուկուն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի, որն իր սուրբ ձեռքերում բարձր է պահել Ղևոնդյանց

ուխտապահ հոգևորականության և Վարդանանց զինվորյալ մանկանց հայրենասիրական դրոշը և հայ եկեղեցու նավը առաջնորդում է այնքան ձեռնհասորեն դեպի պայծառ ափերը՝ ի ծառայություն մեր ժողովրդի ու հայրենիքի։ Թող Ն. Ս. Օթուխյունը երկար ապրի իր գահի վրա, և նրա բարի ու արդար ձեռքերում ծաղկած ու դալար մնա հայրապետական իշխանությունը։

Ղևոնդյանց և Վարդանանց հիշատակին

նվիրված հանդիսության վերջում օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը, շեշտելով, որ Ավարայրի ճակատամարտը, ս. Ղևոնդի և ս. Վարդանի գործը ճշմարիտ հիմնաքարն է մեր ժողովրդի հոգևոր, եկեղեցական և մշակութային կյանքի՝ երեկ, այսօր և հավիտյան։

Հանդիսությունն ավարտվեց խմբովին երգված «Տերունական աղոթք»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

